ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/9119/02/25

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

05.09.2025թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, դատավոր Ս. Երիցյանի նախագահությամբ (այսուհետ նաև՝ Դատարան), քննարկելով, ըստ հայցի Ավետիք Դավթյան Հուսիկի ԱՁ-ի (այսուհետ նաև՝Հայցվոր) ընդդեմ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-25/157»ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ Ավետիք ԴավթյանՀուսիկի ԱՁ-ի հայտը մերժելու որոշումն անվավեր ճանաչելու, որպես հետևանքպայմանագիր կնքելու մասին որոշումն անվավեր ճանաչելու և Ավետիք Դավթյան ՀուսիկիԱՁ-ին ընտրված մասնակից ճանաչելու պահանջների մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

Հայցվորի ներկայացուցիչը հայցադիմումէ ներկայացրել դատարան ընդդեմ Պատասխանողի՝ թիվ «ԵՔ-ԳՀԱԾՁԲ-25/157» ծածկագրով գնանշմանհարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ Ավետիք Դավթյան Հուսիկի ԱՁ-ի հայտըմերժելու որոշումն անվավեր ճանաչելու, որպես հետևանք պայմանագիր կնքելու մասինորոշումն անվավեր ճանաչելու և Ավետիք Դավթյան Հուսիկի ԱՁ-ին ընտրված մասնակիցճանաչելու պահանջների մասին:

Հայցադիմումն էլեկտրոնայինհամակարգի միջոցով դատարան ներկայացվել է 29.08.2025 թվականին, կազմվել է թիվ ԵԴ2/9119/02/25քաղաքացիական գործն, որը **01.09.2025 թվականին, ժամը21:15-ին մակագրվել է** Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուրիրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ս. Երիցյանին, իսկ հասանելի է դարձել **02.09.2025թվականին**:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, Դատարանը գտնում է, որ այն ենթակա է վերադարձման հետևյալպատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիականդատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝ դատարանը հայցադիմումըվարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հայցադիմումը վարույթընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալգնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցներըպահանջելու մասին:

Ապացույցներ պահանջելուվերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսվածժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջներըչկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկհայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողիտիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը,կից փաստաթղթերը, Դատարանը գտնում է, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկաչեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն գլխի նորմերը տարածվումեն էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով դատարանի և դատավարությանմասնակիցների, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ անձանց կողմիցիրականացվող գործողությունների վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ սույն գլխի իմաստով՝ Համակարգն օգտագործող անձ է (են) համարվում՝ իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, **գնումների հետ կապված վեճերով վարույթում պատասխանողները**,

ներկայացուցիչ հանդիսացող փաստաբանները, սնանկության գործով կառավարիչները, նոտարները և արտոնագրված հաշտարարները՝ **անկախ Համակարգի միջոցով որևէ անգամ որևէ գործողություն կատարած լինելուց կամ չլինելուց**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բոլորդատավարական փաստաթղթերը (հայցադիմում, դիմում, բողոք, պատասխան, դիրքորոշում,միջնորդություն և այլն) կազմվում և **ներկայացվում են Համակարգի միջոցով**՝Համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին և առաջադրվող պահանջներին համապատասխան,**բացառությամբ** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների, որոնք ներկայացվումեն միայն նյութական եղանակով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավոր ապացույցները ներկայացվում են դրանք սույն օրենսգրքով նախատեսվածդատավարական փաստաթղթերին կցելու և **Համակարգով ուղարկելու միջոցով**:

Վերոգրյալի հաշվառմամբ Դատարանը գտնում է, որ պատասխանող Երևանիքաղաքապետարանից պետք է պահանջել «ԵՔ-ԳՀԱԾՁԲ-25/157» ծածկագրով գնման գործընթացի հետկապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն **էլեկտրոնային համակարգի միջոցով** (**բացառությամբ** պետական գաղտնիք կազմողտեղեկությունների):

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիականդատավարության օրենսգրքի 119.1-րդ, 124-րդ, 199-րդ և 200-րդ, 234.6-րդհոդվածներով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Ավետիք Դավթյան Հուսիկի ԱՁ-ի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ թիվ «ԵՔ-ԳՀԱԾՁԲ-25/157»ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ Ավետիք ԴավթյանՀուսիկի ԱՁ-ի հայտը մերժելու որոշումն անվավեր ճանաչելու, որպես հետևանքպայմանագիր կնքելու մասին որոշումն անվավեր ճանաչելու և Ավետիք Դավթյան ՀուսիկիԱՁ-ին ընտրված մասնակից ճանաչելու պահանջների մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Երևանի քաղաքապետարանից պահանջել դատարան ներկայացնել «ԵՔ-ԳՀԱԾՁԲ-25/157» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակգտնվող բոլոր ապացույցներն, ընդ որում ապացույցները պետքէ ներկայացվեն **էլեկտրոնայինհամակարգի միջոցով** (**բացառությամբ**պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող Երևանի քաղաքապետարանիկողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ **հնգօրյա ժամկետում**:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ Digitally signed by YERITSYAN SARGIS 3207830072 **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am